Պարույր Սևակ

Իրիկնամուտ

Իր արդուզարդից օրը մերկացավ՝
Խափշիկուհու պես,
Ու մնաց այնպես, ինչպես կար՝ սևո՛ւկ:
Աստղերը վերում՝
Շնիկների պես,
Պպզեցին կրկին:
Ցրտեց:
Լույսերը հետո՛ կվառվեն:
Օրվա այս պահին
Մեղք է զբաղվել որևէ գործով:
Մեղք է մինչև իսկ շոյել ու սիրել:
Թո՛ղ զսպանակված ու ամենամուտ լռությունը գա,
Ու նրա շնչից՝
Թոքերի նման դանդա՛ղ ուռչելով՝
Ամանեղենը թո՛ղ խոհանոցում ինքն իրեն զնգա,
Իսկ քարանձավում մեր ականջների
Թո՛ղ չղջիկի պես ձայները քնեն,
Եվ աստվածները զարթնեն մեր հոգում՝
Մեզ հաշտեցնելով ցրտին ու մթին...
Ի՛նչ լավ է, որ դու
Չես ապրել սիրո արվարձաններում

Եվ միայն նրա կենտրոնը գիտես:
Ի՜նչ լավ է, որ քո
Նորաձևորեն դիզված մազերում
Ունես հնաբույր բարության հետքեր՝
Թելեր սպիտակ:
Ի՜նչ լավ է, որ դու լռում ես կողքիս՝
Անտառաբնակ աքիսի նման,
Իսկ քո տամկացած աչքերում հիմա
Թառում են ահա փոքրիկ փասյաններ...
Ափսո՜ս... ուրեմնն՝ լույսերն են վառվում:

26.XI.1963թ.
Երևան